ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգարժան համագյուղացիներ և հյուրեր, այսօր Ձեր քննարկմանն եմ ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի **մարզի** Ծիածանի գյուղապետարանի և ավագանու կողմից 2012 թվականի ընթացքում կատարված աշխատանքների մասին:

Ես կներկայացնեմ յուրաքանչյուր բնագավառ առանձին - առանձին և վերջում կդրվի քննարկման և կլսենք Ձեզանից յուրաքանչյուրի կարծիքն ու առաջարկությունը:

1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական համայնքի բյուջեով 2012թվականին հաստատվել են՝

Եկամուտներ ընդամենը՝

h/h	Եկամուտներ	2012թ. հաստատված	2-րդ կիսամյակի կատարողականը	կատարողականը առ.01.01.2013թ. o/o
1	Հողի հարկ	4377.3	4460.9	102
2	Գույքահարկ	1600.0	1674.4	105
3	Վարձակալական հողի հարկ	86.0	90.3	105
4	տեղական տուրքեր	190.0	105.0	55.2
5	տեղական վճարներ	50.0	----	----
	ընդամենը սեփական եկամուտներ	6303.3	6330.6	101
5	մնացորդ առ 01.01.2012թ.	169.0		------
6	դոտացիա	13335.7	13335.7	100
	Ընդամենը	19639.0	19666.3	100.1

<u>Ընդամենը եկամուտներ 19666.3 հազ. դրամ</u>

2013թվականի հունվարի 1-ի դրությամբ կատարվել են հետևյալ ծախսերը ըստ բնագավառների

1. Տեղական ինքնակառավարման ապարատի պահպանման համար

1) աշխատավարձ	8946.0
2 սոց. վճար	1850.0
3 պարգևատրում	456.1
4 էլ. ծախսեր	900.0

5. կապի ծառայություն 205.6
6 գույքի և սարքավորումն. 420.0
7 տեղեկատվական 52.4
8 ներկայացուցչական ծախսեր 188.0
9 ընդհանուր բնույթի այլ 166.4
10 գրասենյակային նյութեր 250.0
11վարչական սարքավորումներ 460.0
12 համակարգչային ծառայություն 21.6
13 շենքերի և կառույցների 330.0

ընդամենը 14246.1 հազ.դրամ

2. Շրջակա միջավայր

1.Աղբահանում 960.0
2. Ջրամատակարարում 120.0

ընդամենը 1080.0 հազ.դրամ

3. Մշակույթ, սպորտ և կրոն

1. դրամաշնորհ 1451.3
2. երիտասարդական ծրագիր 800.0

ընդամենը 2251.3 հազ.դրամ

4 Սոցիալական պաշտպանություն

1. սոց. օգնություն 1800.0
2. նվիրատվություններ այլ 13.1

ընդամենը 1813.1

<u>ընդամենը ծախսեր՝ 19390.5 հազ.դրամ</u>

2. **Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկների իրավունքների պաշտպանության բնագավառ**

1. Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է՝ քաղաքացիների ընդունելության օր. որի ժամանակ լուծվում են բնակիչների բազմաթիվ խնդիրներ: Քաղաքացիներից 2012թվականին ստացվել է 52 դիմում - բողոք, որից 48 բավարարվել է:
2.Պաշտպանվում են համայնքի բնակիչների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը:
3.Համայնքում կատարվել է բնակիչների սեռա - տարիքային ամենամյա հաշվառում
4.Ապահովվել է ընտրական տեղամասային կենտրոնում քվեարկության համար անհրաժեշտ կահավորումը:

3. **Հասարակական կարգի պահպանության բնագավառում**

1.Համայնքում պահպանվել է կարգ ու կանոն , մեծ խախտումներ համայնքի բնակիչների կողմից չեն կատարվել

2. Համայնում կատարված իրավախախտումների մասին ոստիկանության ներկայացուցչի տրված տեղեկատվության համաձայն որոշ անձինք ենթարկվել են վարչական պատասխանատվության:

4.ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Աջակցել ենք գարնանային և աշնանային զորակոչերին, ուսումնավարժական հավաքներին:
2. Աջակցել ենք Արցախի պատերազմի մասնակիցների և զոհվածների ընտանիքների հանգստի և սոցիալական խնդիրներին:
3. Աջակցել ենք ՔՊ մարմինների գործունեությանը:

5.ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Աջակցել ենք սոցիալապես անապահով ընտանիքներրի սոցիալական պայմանների բարելավմանը: Համայնքի 134 ընտանիքների տրվել է դրամական օգնություն:

6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Համայնքի գյուղացիական տնտեսությունների համար ձեռք է բերվել պարարտանյութ և դիզ. վառելանյութ:
2. Աջակցել ենք գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը:
3. Մաքրվել է համայնքի ոռոդման ցանցի որոշակի տարածքներ:
4. Կազմակերպվել է համայնքի կենդանիների և թռչունների հաշվառում:

7.ՄՇԱԿՈՒՅԹ , ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

1. Աշխատում է համայնքի բուժ. կետը
2. Մշակույթի տանը կազմակերպվում և անցկացվում են համայնքային սպորտային միջոցառումներ:
3. Գործում է գրադարանը համալրված է համապատասխան գրականությամբ:

8.ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Կենցաղային աղբի կուտակման համար համայնքում չկա առանձնացված տարածք: Շրջակա միջավայրը մաքուր պահելու համար ամեն տարի, բյուջեի ձևավորման ժամանակ, հատուկ ուշադրություն է դարձվում աղբաթափման աշխատանքների վրա:
2. Համայնքում շաբաթը 1 անգամ կատարվում է աղբաթափման աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում՝ 2 անգամ:
3. Բարեկարգվել են գյուղամիջյան փողոցները և դաշտամիջյան ճանապարհները ավազահողային ծածկույթով:

Ծիածանի գյուղական համայնքում 2013էվականին նախատեսվում է կատարել հետևյալ աշխատանքները

1.Մանկապարտեզի շենքի հիմնանորոգում:
2.Ոռոգման ցանցի մասնակի նորոգում:
3. Մշակույթի տան վերանորոգում:
4. Փողոցներում գիշերային լուսավորության անցկացում:
5. Գյուղ մտնող կենտրոնական փողոցի 1.5 կմ ասֆալտապատում
6. Գյուղ. մթերքների շուկայական ցածր գները և բերքի իրացման հետ կապված դժվարությունները

Համայնքի ղեկավար՝ Խ. Գևորգյան

Աշխատակազմի քարտուղար՝ Հ. Մանուկյան

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական համայնքի անդամների ընդհանուր ժողովի արձանագրությունից

2013 թվականի հունվարի 18-ին, ժամը 13-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական համայնքի անդամների ընդհանուր ժողովը՝ համայնքի ղեկավարի 2012 թվականի ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվության քննարկման վերաբերյալ:
Ընդհանուր ժողովին մասնակցում էին համայնքի ավագանու անդամները, համայնքի անդամները թվով 32 գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցները և ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի աշխատակից պարոն Ս. Սարգսյանը:

Նախագահությամբ Խ. Գևորգյանի
Քարտուղարությամբ Հ. Մանուկյանի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:
/Զեկուցող՝ համայնքի ղեկավար Խաչիկ Գևորգյան/

Արտահայտվեցին

Գևորգյան Սամվել - համայնքի անդամ
Գևորգյան Նշան - ավագանու անդամ
Խաչատրյան Անուշավան – համայնքի անդամ
Մանուկյան Մելքոն - համայնքի անդամ

Որոշեցին՝

1.Հավանություն տալ Ծիածան համայնքի ղեկավարի 2012 թվականի երկրորդ կիսամյակի կատարած աշխատանքներին

2.Հանձնարարել համայնքի ղեկավարին և ավագանուն՝ համայնքի անդամների ընդհանուր ժողովում բարձացված հիմնախնդիրներին և առաջարկություններին տալ համապատասխան լուծում:

Իսկականի հետ ճիշտ է

նախագահ Խ. Գևորգյան

քարտուղար Հ. Մանուկյան